ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 3—4 (8—9), 1941 թ. Երևան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՈՒ

Պրոֆ. դ-ր Հր. Աճառյան

ԱՂՎԱՆԻՑ ԳԻՐԸ

Պատմությունից գիտենք, որ Մեսրոպը աղվանների համար էլ գրեր հնարեց և այս գրերով թարգմանվեցան Մարգարեությունները, Ավետարանը և Գործք առաքելոցը, մեկ խոսքով ամբողջ Ս. Գիրքը։ Ահա սրա վկայությունը. «Ապա այնուհետև երանելւոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յակառն թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից՝ մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ամենայն աւանդելոցն ստուգոյ ոչ իւիք անտեղեակք» (Կոր., էջ 19)։

Աղվանից գրի գյուտի հանգամանքները պատկանում են Մեսրոպ-Մաշտոցի և գրերի գյուտի լիակատար պատմության։

Թե աղվանները գիր ունեին՝ վկայում է այդ մասին Մովսես Կաղանկայտվացին, ինքն էլ աղվան, իր Աղվանից պատմության մեջ, գիրք Ա, գլ. Գ, հետևյալ ձևով. «Եւ ի սոցանէ, որք գիտեն զզպրութիւն՝ Եբրայեցիք, Լատինացիք, որով և Հռոմք վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք, Աղուանք...»

Վրացի նշանավոր գիտնական Շանիձեն՝ իր մի պատվական աշխատության մեջ (Новооткрытый алфавит Кавказских Албанцев и его значение для науки, Тбилиси, 1938), *էջ 3՝ գտնում է, որ Կաղանկայտվացու հիշյալ տեղեկությունը քաղված է Հիպպոլիտից, որի բառերը հետևյալ ձևով են.* Οἱ δὲ ἐπιστάμενοι αὐτῶν γράμματά εἰσιν: Ἴβηρες, Λατῖνα, οἷς χρῶνται οἱ Ῥωμαῖοι, Σπάνοι, Ἕλληνες, Μῆδοι, Ἀρμένιοι...

Նկատելի է, որ Հիպպոլիտի հատվածում գրագետ ազգերի շարքի մեջ առաջին տեղը տրված է վրացոց՝ նույն իսկ հույներից, հռոմայեցիներից և մարերից առաջ։ Կաղանկայտվացու հատվածում նրա տեղ դրված է եբրայեցիք, որ պակասում է Հիպպոլիտում։ Դժբախտաբար ձեռքի տակ չունիմ Հիպպոլիտը, որպեսզի ավելի ուշադրությամբ կարողանայի քննել, թե որտեղ է սխալը. Հիպպոլիտի՞ մոտ՝ որ մոռացել է հիշել եբրայեցոց, թե՞ Կաղանկայտվացու մոտ՝ որ մոռացել է հիշել վրացոց և նրանց տեղ գրել է եբրայեցոց։ Իմ կարծիքով՝ բնագրում երկուսն էլ գրված պիտի լինեին և հետո անունների նմանության պատճառով խառնվել են իրար։ Շանիձեն նկատում է սակայն, որ Հիպպոլիտի մոտ չկա Աղվանք, իսկ Կաղանկայտվացին ավե-

լացնում է։ Այս արդարացի հավելումը ցույց է տալիս, թե աղվանները գիր ունեին, որովհետև Կաղանկայտվացին Հիպպոլիտից ավելի լավ գիտեր, թե իրենք գիր ունին թե ոչ։ Միևնույն ժամանակ Կաղանկայտվացին ասում է. «Յետ այսորիկ գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղեն եկեղեցիք և կտակարանք»։ Շանիձեն գտնում է, որ Խազրաց այս արշավանքը Զ դարի առաջին կեսին է և այն «կտակարանք» ուրիշ բան չեն, եթե ոչ աղվաներեն լեզվով Հին և Նոր կտակարանները։

Աղվաներեն գրի գոյության վստահելի ապացույցներից մեկն էլ հայոց Բաբգեն կաթուղիկոսի ժամանակ, այն է՝ Զ դարի սկզբում գրված այն նամակն է, որ պահված է Գիրք Թղթոցի մեջ՝ էջ 48—51։ Այստեղ գտնում ենք հետևյալ հատվածը. «Այսուիկ վարիմք հաւատովք, զոր և գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իւրաքանչիւր աշխարհի գրով։ Եւ այժմ զնոյն երկրորդեցաք»։

Աղվանից ազգը, լեզուն և գրականությունը շարունակում են իրենց գոյությունը ոչ միայն արաբների, այլ և մոնղոլների արշավանքի ժամանակ։ Այս մասին մի զարմանալի վկայություն ունինք Հեթում պատմիչի մոտ (տպ. Վենետիկ, 1842, էջ 14)։ Խոսելով հայոց մասին, հեղինակը ասում է թե «ունին նշանագիրս արամեանս և այլս եւս՝ որ ասին հալոյեն»։ Այս տարօրինակ բառը երկրորդ անգամ գտնում ենք էջ 24, ուր խոսելով արաբների մասին, ասում է թե «կալան զմեծն Ասիա ողջոյն, բաց ի թագաւորութենէն Ափխազաց, որ ի Վիրս, և բաց ի գաւառէն անտի թագաւորութեան Հայոց, որ ռամկօրէն կոչի Հալոյէն։ Այս երկու նահանգք զդէմ կալան Սարակինոսաց եւ ոչ կամեցան բնաւ հպատակիլ նոցա եւ այնպէս զտան ապաստան եւ պատսպարան ամենայն քրիստոնէից, զորս հալածէին Սարակինոսք»։ Այս բացատրությունից երևում է, որ Հալոյենը Աղվանքը պետք է լինի. նկատի ունենանք նաև այն, որ, ըստ Հեթում պատմիչի՝ Հայաստանի սահմանը սկսվում է Դարբանդ (Միրալի) քաղաքից, որով Աղվանքը լինում է Հայաստանի մաս (գլուխ Թ). պատմիչը Աղվանք անունով առանձին երկիր չգիտե։

Ըստ այս տեղեկության, ուրեմն նույնիսկ 1305 թվին աղվաներեն գրերը գոյություն ունեին. բայց թե ինչ եղավ այնուհետև, տեղեկություն չունինք։ Անշուշտ հայերենի ազդեցության տակ՝ այդ գիրն ու գրականությունը այնպես են ջնջվել, որ հետք անգամ չի մնացել։ Եվ հաստատապես կարող ենք ասել, թե մեր զանազան ձեռագրերի մեջ հիշված «աղուաներէն» գրերը աղվանագիր բառի հետ շփոթելու արդյունք է։ Այսպես օրինակ՝ Քարամյանցի գտած գիրը՝ որ ձեռագրում կոչված է «Գիր Աղուանից» և որին հավատում է նաև Քարամյանը և այն ծածկագրերը իբրև նորագյուտ աղվաներեն գիր հրատարակել է։ Այս կեղծիքի մասին տես նաև Ֆրեդերիք Մուրադի հոդվածը՝ Հանդ. ամս. 1903, էջ 334—335։

Թե աղվանագիր և աղվանից գիր իբրև մերձավոր բառեր կարող էին հեշտությամբ շփոթվել իրար հետ, հմմտ. Աղավնի հատուկ անունը, որ Սեբաստիայում հնչվում է Աղվընն, նույնպես Աղուվանից գրչությունը՝ փոխանակ «Աղուանից» (Ցուցակ ձեռագրաց Թավրիզի, № 44, էջ 369 բ)։

Գիտունները շատ են հետաքրքրվել գտնելու համար որևէ հետք աղ-

վանների լեզվից ու գրից. բայց ըստ բոլոր չափքերը դուր են անցել և գտնվածներն էլ սուտ են դուրս եկել։ Այսպես՝ Մակար եպս. Բարխուդարյանց (Պատմ. Աղուանից, Վղրշպտ. 1902, էջ 17) կարծում է, թե գտել է աղվանից գրերով մի կարճ արձանագրություն Դերբենդի պարսպի արտաքին պատի վրա, որի նմանահանությունն էլ տալիս է Աղուանից երկիր և գրագիր, էջ 119։ Նույնպես ֆրանսիացի հայագետ E. Boré, Cor. T. II, էջ 49 խոսում է աղվաներեն մի հին ձեռագրի մասին, որ գտնվել է Էջմիածնում և որի մասին զեկուցել է 1838-ին ֆրանսիական ակադեմիայում։ Բայց այս էլ ուրիշ բան չէր, եթե ոչ հայերեն նոտր գիրը (տես Խորենացի, թարգմ. Ա. Ստեփանեի, Բ հատ., ծան. 750)։

Շանիձեն ասում է, որ նման ենթադրական աղվաներեն արձանագրություններ գտել են Ս. եպս. Զալալյանց՝ Դմանիսում, Վարդիսուրանիում, Բիլվարում, մի քանի վրացի գիտնականներ՝ Վրաստանի զանազան կողմերում և մի արձանագրություն էլ հին Գանձակում (այս բոլորի նմանահանությունը տես Շանիձեի վերոհիշյալ գրքում, էջ 54—61)։ Բայց սրանցից ոչ մեկը չկարողացավ մի որևէ գաղտնիք բաց անել։

Անմոռանալի փառքի ու գովի արժանի եղավ վրացի երիտասարդ գիտնական Աբուլաձեն, որ 1937 թ. սեպտ. 28-ին Էջմիածնի (այժմ Երևանի) Ձեռագրատան № 7117 ձեռագրում գտավ կորած աղվաներեն գրերը։ Գյուտի ավետիսը հայտնեց իր ուսուցիչ Շանիձեին, որ իսկույն մեկնեց Երևան (28—29 հոկտ. 1937 թ.), ի մասն ուսումնասիրեց ձեռագիրը և իր ուսումնասիրությունը հրատարակեց վերոհիշյալ աշխատության մեջ, որից քաղում ենք մենք էլ բոլոր կարևոր տեղեկությունները։

Ձեռագրի բուն օրինակը բերված է եղել Կաֆայից (Թեոդոսիա) Կիրակոս Վիրապեցու ձեռքով. Թովմա Մեծոփեցու աշակերտ Հովհան Արճիշեցին նույնից արտագրել է նոր օրինակը՝ սրբագրությամբ իր ուսուցիչ և Մեծոփի առաջնորդ Թովմայի։ Մեծոփեցին առաջնորդ եղավ 1411-ին և մեռավ 1448-ին. ուստի ձեռագիրն էլ օրինակված է 1411—48 թվերին։ Շատ ավելի հին է մայր ձեռագիրը, ինչպես կտեսնենք քիչ հետո։

Ձեռագիրը շատ լուրջ լեզվաբանական բազմալեզվյան մի աշխատություն է, որ պատիվ է բերում թե հեղինակին և թե արտագրողին։ Այս բանը գիտակցում է նաև ինքը Թովման, որ հիշատակարանում ասում է. «Բայց դուք ընկալարուք զսա՝ իբրև զտախտակն Մովսիսի և զԱւետարանն Քրիստոսի և մի ոք պախարակեսցէ զսա, զի ի վաղուց ժամանակաց նախատինս կրէաք յազգաց քրիստոնէից. այսօր ետ զսա Աստուած ի ձեռս մեր»։

Ձեռագիրը բովանդակում է քերականական և բառարանական բազմատեսակ տեղեկություններ, որոնց թվում նաև 7 լեզվի այբուբեն (հունարեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, աղվաներեն, խպտիերեն և արաբերեն), և աղոթքի նմուշներ հունարեն, ասորերեն, վրացերեն, պարսկերեն, արաբերեն, քրդերեն և թուրքերեն լեզուներով, բոլորն էլ հայատառ։ Տառաձևերը 9-րդ, 10-րդ և 11-րդ դարերի գրչության կերպարանքն ունին. տառադարձությունը հին հայոց ձևով է. լ ձայնի փոխարեն հաճախ գրված է ղ և փ-ի դեմ՝ փ. այս բոլորը ցույց է տալիս, որ մայր օրինակը Ժ—ԺԱ դարերից էր։

Այստեղ դնում ենք աղվանից այբուբենը, իրենց անունով և արժեքով։

1.		ալթ	ա	19.		ճառ	ճ	37.		խամ	խ
2.		օղևթ	օ	20.		զոխ	զ	38.		ձայ	ձ
3.		զիմ	զ	21.		կար	կ	39.		չատ	չ
4.		դատ	դ	22.		լիտ	լ	40.		պէն	պ
5.		էր	է	23.		հէտ	հ	41.		փէս	փ
6.		զառլ	զ	24.		հայ	հ	42.		կատ	կ
7.		են	ե	25.		ար	ա	43.		սեկ	ս
8.		ժիլ	ժ	26.		ցոյ	ց	44.		վէզ	վ
9.		թաս	թ	27.		ճի	ճ	45.		տիւր	տ
10.		ճա	ճ	28.		չայ	չ	46.		սոյ	ս
11.		յուդ	յ	29.		մակ	մ	47.		իոն	ի
12.		ժա	ժ	30.		կառ	կ	48.		ծաւ	ծ
13.		իրբ	ի	31.		նուց	ն	49.		ցայն	ց
14.		շա	շ	32.		ջայ	ջ	50.		յայդ	յ
15.		լան	լ	33.		շաք	շ	51.		փիւր	փ
16.		ինա	ի	34.		ջայն	ջ	52.		քիւ	ք
17.		խէն	խ	35.		ուն	ու				
18.		դան	դ	36.		տայ	տ				

Այս հարուստ այբուբենի առաջ մեր առաջին հարցը այն է, թե արդյոք մի վարպետ խեղկատակի կամ խաբեբայի հետ չէ՞ մեր գործը և ի՞նչ երաշխիք ունինք վստահելու համար նրա ճշտությանն։ Բայց անշուշտ պետք չէ կասկածել՝ հետևյալ պատճառներով.

ա) Գիրքը բոլորովին լուրջ բովանդակություն ունի, զբաղվում է մի-

այն գիտական հարցերով, քերականությամբ ու բառարանով, և ոչ թե սխտարական կամ հմայական ցնորաբանությամբ, որպեսզի թույլ տայինք մեզ կասկածել այբուբենի ճշմարտության վրա։

ը) Աղվանից այբուբենը մենակ չէ. նա գտնվում է վեց ուրիշ այբուբենների հետ, որոնք ոչ մի կեղծիք չեն պարունակում. ինչու՞ աղվաներենի վրա կասկածել։

գ) Բացի այբուբեններից կան նաև մի քանի լեզվով աղոթքներ, որոնք, ինչպես տառադարձությունը և հնչումը ցույց են տալիս, ավելի նոր ժամանակներից են. ունինք արդեն նրանց մեջ ֆ ձայնը և ղ հնչված gh՝ փոխանակ l։ (Փակագծի մեջ նկատենք, որ քրդերեն հատվածը քուրդ լեզվի ու գրականության ամենահին նմուշն է, գոնե 400 տարի ավելի հին, քան մեր նոր աղբյուրները։ Ի. Աբուլաձեն իրավունք ունի հպարտանալու նաև իր այս գյուտով, որ և արժանի է առանձին ուսումնասիրության՝ մի քրդագետի կողմից)։ Արդ՝ այս զրվածքներն էլ բոլորովին ճիշտ են և որևէ կեղծիք չեն ներկայացնում։ Եթե գրիչը խաբեբայի մեկը լիներ՝ կարող էր աղվաներենից էլ մի սուտ բան սարքել։

դ) Իրավունք չկա կասկածելու նաև այն պատճառով, որ գիրքը գրել ավողը և սրբագրողը Թովմա Մեծոփեցին է, ԺԵ դարի հայոց ամենից մեծ մարդը, նշանավոր գրող և պատմիչ, հայրապետական աթոռի փոխադրության գլխավոր հեղինակ և Էջմիածնի երկրորդ հիմնադիր։

ե) Մեծոփեցին այնպիսի մեծ արժեք է տալիս այս աշխատության, որ աստվածաշնորհ տանտարանյա պատվիրաններին և Քրիստոսի Ավետարանին հավասար է դնում։ Արդեն այս հանդգնությունը չափազանց է. և կարելի՞ բան է, որ այսպիսի հանդգնությունից հետո նա մեզ կեղծիք ու խաբեբայություն հրամցներ։

զ) Նրանք, որ կասկածում են նորագյուտ աղվան այբուբենի ստուգության վրա, առաջնորդված են անշուշտ իրերի արդի դրության ազդեցությամբ։ Արդեն մի քանի հարյուր տարի է, որ աղվաներեն այբուբենը անհետ կորել է և նրանք չեն կարողանում հավատալ այդ անսպասելի մեծ գյուտին։ Նրանք նման են այն մարդուն, որ երկար ժամանակ խավարում մնալուց հետո՝ չի կարողանում նայել լույսին։ Բայց չմոռանանք, որ Մեծոփեցին ապրում էր ԺԴ դարում. 1387 թվին՝ Լենկթիմուրի արշավանքի սարսափից փախավ ապաստանեց ս. Կարապետի վանքը. իր ժամանակ դեռ մոռացված չէր աղվաներեն այբուբենը, քանի որ Հեթում պատմիչը նրա գոյությունը հիշում է դեռ 1305 թվին։

է) Բայց նույն իսկ եթե ենթադրենք, որ Մեծոփեցու ժամանակ ջնջված էր աղվաներենը, չմոռանանք, որ նա օրինակել է Կաֆայի ձեռագրից, որ ԺԱ. դարից էր, երբ դեռ աղվաներեն լեզուն և գիրը գործածական էին։

ը) Նորագյուտ աղվաներեն այբուբենի տառերի թիվը 52 է. ոչ մի մարդ չէր կարող երևակայել այսպիսի ճոխ այբուբեն. և եթե Մեծոփեցին մի կեղծիք արած լիներ, անշուշտ նա կկազմեր միայն և մի՛միայն 36 կամ. 38 տառ, որպեսզի համաձայն լիներ հայերեն այբուբենին, ինչպես են այն

բոլոր «աղվանից գրերը», որոնք զանազան մարդկանց կեղծիքներն են իբրև գաղտնագիր։

Թ) Բացարձակապես անսովոր է նաև այբուբենի շարքը, որ ոչ մի լեզվի այբուբենի շարքին համապատասխան չէ, ինչպես կտեսնենք քիչ հետո։ Եթե Մեծոփեցին կեղծիք արած լիներ, որաեղից կամ ինչու պետք է հնարեր այսպիսի նորատեսակ շարք։

ժ) Անսովոր են նաև տառերի անունները, որոնք ոչ մի լեզվի մեջ գոյություն չունին։

Այս պատճառաբանությունները ստիպում են մեզ ընդունել մեր բոլոր կասկածները և ընդունել, որ ավանդված այբուբենը, որի գյուտը պարտական ենք վրացի գիտնական Իլիա Աբուլաձեին, բոլորովին ստույգ և վստահելի է, ինչպես մանրամասն ուսումնասիրությամբ ապացուցել է նաև Շանիձեն։

Կա սակայն մի կետ, որ մի անորոշ բիծ է դնում աղվաներեն այբուբենի վրա։

Հունարեն տառերը թվելու ժամանակ Δ, Ο, Χ, φ տառերը փոխանակ անվանելու դելտա, ο (ո), ֆի (խի), փսի, կոչում է ելտա, ու, քի (կարդա ֆի), փու։ Ասորերեն տառերից չորսը (g, z, l, ʻ), փոխանակ կոչելու gimal, zain, lamed, ʻayin, կոչում է դամլ, զե, լասդ, էյ։ Լատիներեն տառերից E պակասում է, իսկ H կոչում է խտ (փոխանակ հա) և I իկա (փոխանակ ի). այս վերջինը (իկա) ձևացել է ի անվան վրա ավելացնելով հաջորդ K կա տառի անունը, և այս սխալը շարունակվում է՝ ամեն մի տառ ստանալով իրեն հաջորդող տառի անունը։ Վրացերենի մեջ պակասում է երրորդ տառը՝ Գ։ Այսպիսի սխալներ, որոնք արտագրության արդյունք են, կան նաև մյուս այբուբեններում և հավանաբար կան նաև աղվանից այբուբենի մեջ։ Բայց տառերի ձևը և շարքը պետք է ճիշտ լինին՝ ինչպես մյուսներն են ճիշտ։

Այս վերապահությամբ քննենք ուրեմն այբուբենը.—

Աղվաներեն այբուբենը բաղկացած է 52 տառից, որից 9 ձայնավոր և 43 բաղաձայն։

Ձայնավորներն են՝

Երկու տեսակ ա, երեք տեսակ ի, և մի մի տեսակ է, ե, օ, ու։

Բաղաձայններն են՝

Շրթնային— պ, 2 փ	Շչական— 3 զ, 2 ժ, 2 շ, 2 ս
Ատամնական— դ, 2 տ, թ	Կիսաձայն— 2 յ, վ
Կատակային— գ, 3 կ, ֆ	Նայ— 2 լ, —
Քմական— 2 ջ, 3 ճ, 2 չ	Ռնգական— մ, ն
Ծեքական— ձ, ծ, 2 ց	Կոկորդական— 2 խ, 2 հ

Եթե այս հնչյունների ընդհանուր հորինվածությունը քննենք, կտեսնենք, որ մի մասը ճշտիվ համաչափ է իրար, մի մասը՝ ոչ։ Այսպես՝ ունինք երկու տեսակ ա-ի դեմ՝ երեք տեսակ ի և մի մի տեսակ է, ե, օ, ու։ Երկու տեսակ ա-ի դեմ սպասելի էր երկու տեսակ ի. ուստի ի-երից մեկը հավանաբար հնչվում էր իւ (u)։ Եթե ունենայինք երկու տեսակ ու, մեկը ü պիտի համարեինք. բայց քանի որ միայն մի ու կա, ուս-

տի երրորդ ի ձայնը համարում եմ ü, որ արդեն գործածված է տիւր, փիւր տառանունների մեջ։

Շրթնայինների մեջ բ չկա. կա մի պ և 2 փ. համաչափությունը շատ խախուտ է. ուստի երկու փ-երից մեկը պետք է համարել ֆ, իսկ բ մյուս ավելորդ բաղաձայններից մեկի հետ շփոթված է։ Թե բ ձայնը գոյություն ուներ լեզվի մեջ՝ ցույց են տալիս այբուբենի մեջ եբ և իբբ տառերի անունները։

Առամնականների մեջ մեկ տ ավելորդ է։

Կատկայիններից ունինք մի գ, մի f և երեք կ. այս երեքը շատ անհամաչափ է. ուստի պետք է կարծել, որ նրանցից երկուսը ներկայացնում են ղ և ղ՝ ձայները։

Քմականները լավ են, միայն մի ճ ավելորդ է։

Ծեքականները նույնպես լավ են, բայց մի ց ավելորդ է։

Շչականների խումբը սքանչելի է. 2 ժ, 2 շ, 2 ս շատ համաչափ են. միայն 3 զ-ից մեկը ավելորդ է։

Կիսաձայնների մեջ 2 յ-ի դեմ սպասելի էր 2 վ, այն է՝ վ և ւ (v, w)։

Նայերից 2 լ-ի դեմ սպասելի էր 2 ռ, այն է՝ ռ և բ. արդեն տառերի անուններին մեջ սրանք գործածված են. հմմտ. զառլ, իբբ, ճառ, կար, ար, կառ, տիւր, փիւր։ Անշուշտ սրանք շփոթված ու խառնված են ավելորդ տառերի հետ։

Ռնգականները և կոկորդականները շատ համաչափ են։

Պակասներն ու ավելորդները ճշտիվ լրացնում են իրար։

Ըստ այսմ աղվաներեն տառերը հետևյալներն են (ըստ մեր ենթադրության).

Ձայնավորները՝ 2 ա, 2 ի, ե, է, օ, ու, իւ։

(Երկրորդ ա ներկայացնում էր հավանորեն ä հնչյունը, որ այսօր էլ այնքան առատ է Ղարաբաղի բարբառում)։

Բաղաձայններ՝

Շրթնային—բ, պ, փ, ֆ	Շչական—2 զ, 2 ժ, 2 շ, 2 ս
Առամնական—դ, տ, թ	Կիսաձայն—2 յ, վ, ւ
Կատկային—գ, կ, f	Նայ—2 լ, բ, ռ
Քմական—2 ջ, 2 ճ, 2 չ	Ռնգական—մ, ն
Ծեքական—ձ, ծ, ց	Կոկորդական—2 խ, 2 հ, ղ, ղ՝

Տառերի արժեքի մասին որոշ վերապահություն ունենալու պատճառով՝ չենք կարող ընդհանրապես խոսել տառաձևերի ծագման մասին և համեմատել ուրիշ այբուբենների հետ։ Այնուամենայնիվ կարելի է հիշել Զ (ա) որ շատ նման է մեր նոտրագիր հնաձև գլխատառ ա-ին. 6-րդ տառը (զառլ) նման է գլխիվայր դարձած և մի պոչը կտրած Զ-ի.

9-րդ տառը բաա նման է հուն. Ֆ-ի։

11-րդ տառը ղ (յուղ) նման է մեծացրած եբրայական yod-ի։

13-րդ տառը վ (իբբ) նման է շուռ տված Ի-ի։

16-րդ տառը (ինա) նույն իբբ տառն է՝ տակից ավելացրած մի պոչ՝ երկու կողմ թեքված։

18-րդ տառը (դան) հայերեն Դ տառն է՝ գլուխը կտրած։

23-րդ տառը (հեռ) նույն է հյ. Հ տառի հետ՝ միայն տակին, ձախից մի թև ավելացրած։

28-րդ տառը (չայ) գլխիվայր շրջված Շ է։

31-րդ տառը (ցուց) մեր Ն տառն է, կտուցը մեծ և երկրորդ այունը կ-ի նման դեպի ցած քաշած։

34-րդ տառը (ջայն) նման է մեր սովորական ջ-ին, միայն պոչը կտրած։

35-րդ տառը ճիշտ մեր Ո ձևն ունի՝ վրան ավելացրած մի շեշտ՝ ու-ի փոխարեն։

38-րդ տառը (ձայ) նման է մեր Զ-ին՝ գլխիվայր շրջած և պոչը մի քիչ ձևափոխած։

39-րդ տառը (չատ) նման է մեր Շ-ին, նույնպես շուռ տված և պոչը ձևափոխած։

46-րդ տառը՝ 8 (սոյ) շատ նման է լատին S-ին։

50-րդ տառը (յայդ) նույն է 11-րդ տառի (յուդ) հետ, որի աջ կողքից մի կանթ կա ավելացրած։

51-րդ տառը (փիւր) թե անունով, թե ձևով և թե տեղով նույն է մեր փ-ի հետ։ Ուստի պետք է ընդունել, թե 41-րդ տառը (փեռ) հնչվում էր փ։

52-րդ տառը (քիւ) հեռու չէ մեր Ք-ից։

Բացի սրանցից նկատելի է, որ երկու ճ-երը (19 և 27) իրարից են կազմված։

Նույնպես երկու յ-երը (11 և 50) իրարից են կազմված (անունով էլ նույն են)։

Երկու ի-երը (13 և 16) իրարից են կազմված։

Երկու տ-երը (36 և 45) գրեթե նույն ձևն ունին. երկրորդը առաջինի նուրբ մասը մեծացրած և կողքից մի թև ավելացրած։

Երբ տառաձևերը համեմատում ենք իրար հետ, տեսնում ենք, որ մի քանիսը շատ նման են։ Օրինակ՝ № 6 և № 33 հավասարապես նման են բոլորագիր ծ-ի. բայց առաջինի գլուխը կարճ է, իսկ երկրորդինը՝ երկար։ № 12 և № 49 հավասարապես նման են լատինական գլխատառ T-ին. բայց առաջինը գլխի ձախակողմում փշիկ չունի, իսկ երկրորդը ունի։ Ըստ այսմ, №№ 25 և 47 թեև հավասարապես բոլորովին նման են գլխատառ Ն-ին, և №№ 1 և 29 նույն են մեր Զ-ի հետ, պետք է ենթադրել թե ունեցել են մի փոքրիկ տարբերություն, որ գրչագրի ձեռքի տակ անհետացել է։ Ըստ իս՝ № 1-ի մեջ, Զ-ի գլուխը ավելի կլոր և բունը ավելի երկար է, քան № 29-ում։ Ենթադրելի է նաև, որ № 25 և № 47 տարբերվում էին կտուցի մեծությամբ։

Տառերի անուններից հետևյալները բոլորովին կամ մասամբ նման են հայերեն անուններին.— շա, ինա, խեն, ցոյ, չայ, ձայ, պեն (բեն), փիւր։ Իսկ ընդհանրապես տառանունները կազմում են հետևյալ խմբակները.

1. նա, ժա, շա.
2. լան, դան.
3. կար, ար, կառ.
4. ցոյ, սոյ.
5. հայ, չայ, ջայ, տայ, ձայ.
6. են, պեն, խեն.
7. ջայն, ցայն.
8. գատ, չատ, կատ.
9. տիւր, փիւր.

Առանձին են ձևում մեծագույն մասը.—ալթ, օդեթ, գիմ, էբ, գաղ, ժիլ, թաս, յուդ, իրբ, ինա, ճառ, զոխ, լիտ, հէտ, ճի, մակ, նուց, շամ, ուն, խամ. փէռ, սէկ, վէզ, իոն, ծաւ, յայդ, ֆիւ:

Վրացականին նման անուններ են՝ են, ինա, խամ, ժիլ (ծիլ), ճառ (ճար), ուն (ոն), ցայն (ցան):

Ամենատարօրինակն է տառերի շարքը, որ ոչ մի այբուբենի հետ նմանություն չունի. հայերենի հետ նման են գալիս սկիզբը (ա), *միջից* էբ, գաղ, են (=*հյ.* է, զ, է, *№ 5, 6, 7, որ տեղով էլ նույն են*), ժա, իրբ (= *հյ.* ժ, ի, *№ 12, 13*), չատ, պէն, (=*հյ.* չ, պ, *№ 39, 40*), սէկ, վէզ, տիւր (=*հյ.* ս, վ, տ, *№ 43, 44, 45*) *և վերջից՝* փիւր, ֆիւ: *Բացի սրանից* թաս (թ) *տառը բռնում է իններորդ տեղը՝ ճիշտ հայերեն* թ *տառի պես:*

Աղվաններեն տառերի գյուտը ոչ միայն մեծ գիտական արժեք ունի, այլև գալիս է փարատելու այն կասկածները, որ ոմանք ունեին Կորյունի արժանահավատության մասին և հաստատելու, որ Կորյունը ճշմարտախոս պատմիչ է և նրա խոսքերը պետք է ընդունել ամենայն սրբությամբ:

1941 թ., ապրիլ